



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

-- օգոստոսի 2017 թվականի №...Ա
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒՅԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2007 թվականի մարտի 23-ի №119Ա որոշմամբ «Միլիցիում Մայկրո Սիստեմս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրվել է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի №0107 լիցենզիան (այսուհետ՝ Լիցենզիա), որը Հանձնաժողովի 2007 թվականի հոկտեմբերի 19-ի №468Ա որոշմամբ վերաձևակերպվել է «ՖԱՅԲՐՆԵՏ ՔՈՍՅՈՒՆԻՔԵՅՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) անվամբ,

բ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 10-ի վճռով Ընկերությունը սնանկ է ճանաչվել, իսկ 2016 թվականի հոկտեմբերի 21-ի որոշմամբ սկսվել է Ընկերության լուծարման գործընթացը,

գ) Ընկերության սնանկության գործով կառավարչի ներկայացուցիչը 2017 թվականի հուլիսի 26-ին գրությամբ դիմել է Հանձնաժողով՝ Ընկերությանը տրամադրված Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ

մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը՝ **Հանձնաժողովը որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի՝

1) 2007 թվականի մարտի 23-ի «Միլիցիում Մայկրո Սիստեմս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիա տրամադրելու մասին» №119Ա որոշումը,

2) 2007 թվականի հոկտեմբերի 19-ի «Միլիցիում Մայկրո Սիստեմս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի №0107 լիցենզիան վերաձևակերպելու մասին» №468Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով Ընկերությանն իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝**

Մ.ՍՈՂՈՄՈՆՅԱՆ